ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 57

ք. Երևան 25.05.2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-22/7» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 02535853; գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գայի պ. 20շ. 11) (այսուհետ՝ նաև Մասնակից): Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում, պահանջվող փաստաթղթերից առկա է միայն գնային առաջարկը՝ հավելված N 2-ը:

Գնահատող հանձնաժողովն առաջարկել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկումներ չի ներկայացրել (ընդհանրապես չի ներկայացրել): Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը մերժել է «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ի հայտը:

Հաշվի առնելով, որ «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ն խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-22/7» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ի գնման գործընթացին՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-22/7» ծածկագրով գնման ընթացակարգին հետագա մասնակցության դադարեցմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության պահանջները, որոշում եմ՝ «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ